

# Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ  
WWW.SOURPHAGOP.ORG (17-րդ տարի)

## Այս թիւով.....

Հոկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց Էջ 2, 3, 4

- Ս. Աւետարանիչներ.
- Ս. Մատթէոս, Ս. Մարկոս,
- Ս. Ղուկաս, Ս. Յովհաննէս
- Քրիստոսի 72 աշակերտները
- Եօթանասնից կամ Septuagint
- Ս. Թարգմանիչ Վարդապետները
- Ս. Մեսրոպ Մաշտոց
- Ս. Եղիշէ Պատմիչ
- Ս. Դաւիթ Անյաղթ
- Ս. Սովսէս Քերթող
- Ս. Գրիգոր Նարեկացի
- Ս. Ներսէս Շնորհալի

Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը Էջ 5

Օշական գիւղի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին Էջ 6

Փութանակի Թարգմանութիւն Էջ 6

Ս. Թարգմանչաց շարական, Մեսրոպ Մաշտոցին Էջ 7

Վարազայ Սուրբ Խաչ, Վարազավանգ Էջ 8

Եկեղեցական բառարան Էջ 8-9

Պահուած Բառ Էջ 10

Յիսուսի Առաքեալները Էջ 11

Յիսուսի Փորձութիւնը Էջ 12

Խօսքեր Ղազարոս Աղայեանէն Էջ 13

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 14-17

Լուրեր՝ Կիրակնօրեայէն Էջ 18-20

Հոկտեմբեր 2017 (ԻԵ տարի թիւ 2)



### Ամսուան Համարները

«Ճանաչել զիմաստութիւն եւ զիրատ իմանալ զբանս հանձարոյ»: *Առակաց 1.2*  
 «Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է»: *Առակաց 1.7*

## Հոկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

|         |  |
|---------|--|
| Կիր. 1  | Տօն՝ Վարագայ Սուրբ Խաչին                             |
| Շբթ. 7  | Եօթանասուներկու Աշակերտներ Քրիստոսի                  |
| Շբթ. 14 | Մեր Ս. Թարգմանիչ վարդապետներ                         |
| Շբթ. 21 | Ս. Աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս |
| Շբթ. 28 | Ս. 12 վարդապետներ                                    |
| Կիր. 29 | Գիտ Ս. Խաչի  |

Պահքի Օրեր: 4, 6, 11, 13, 18, 20, 27



Ս. Մատթէոս



Ս. Մարկոս



Ս. Ղուկաս



Ս. Յովհաննէս

Այս տարի Հոկտեմբեր 21-ին Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ տօնը Քրիստոսի կեանքն ու քարոզչութիւնը պատմող աւետարաններու հեղինակներուն՝ Ս ու Ր Բ աւետարանիչներ՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի:

Մատթէոս պաշտօնով մաքսաւոր էր՝ այսինքն հարկահաւաք, երբ Յիսուս զինք իր 12 առաքեալներէն մէկը ըլլալու կանչեց:

Մարկոսի Աւետարանը չորս աւետարաններէն ամենէն կարճն է եւ գրուած է բոլորէն առաջ:

Ղուկաս յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պօղոս առաքեալի, անոր հաւատարիմ գործակիցը դարձած էր բազմաթիւ անգամներ անոր հետը ճամբորդած:

Յովհաննէս՝ Յիսուսի 12 Առաքեալներէն կրտսերագոյնն էր: Իր աւետարանը յատկանշական կերպով տարբեր է միւս աւետարաններէն: Անիկա Յիսուսը կը ներկայացնէ որպէս Աստուծոյ Խօսքը որ մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

**Քրիստոսի 72 աշակերտները** Բացի 12 առաքելներին Յիսուս ուներ նաև 72 աշակերտներ, որոնք ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերուն: Դժբախտաբար, Աւետարաններուն մէջ նշուած չեն այս աշակերտներու անունները: Աւետարաններուն մէջ, «աշակերտ» բառը ընդհանրապէս կը գործածուի Քրիստոսի բոլոր հետեւորդներուն համար: Յիսուս Քրիստոս իր առաքելները եւ աշակերտները «իբրև գառներ գայլերու մէջ», երկու երկու ուղարկեց, քարոզելու Աստուծոյ Արքայութիւնը՝ ըսելով. «Ով որ ձեզ լսէ՛ զիս լսած կ'ըլլայ, եւ ով որ ձեզ մերժէ՛ մերժած կ'ըլլայ զիս դրկողն ալ» (տե՛ս Դուկաս Ժ 1-20): 12 առաքելներուն եւ 72 աշակերտներուն միջեւ գրեթէ տարբերութիւններ չկան. անոնք ունին նոյն իշխանութիւնը եւ նոյն առաքելութիւնը (Դուկաս Ժ 9, Թ 1), սակայն 72 աշակերտներուն բոլոր անունները, Բեթլեհեմի սուրբ մանուկներու նման, միայն Աստուծոյ յայտնի են՝ գրուած երկնքի արքայութեան սրբազան գիրքին մէջ:

Հայ Առաքելական եկեղեցին, Քրիստոսի 72 աշակերտներու յիշատակութեան օրը կը տօնէ Վարազայ Խաչին յաջորդող շաբաթ օրը, որ այս տարի կը հանդիպի Հոկտեմբեր 1-ին:

**Եօթանասնից կամ Septuagint** Ե. Դարուն մեր Թարգմանիչները Աստուածաշունչի թարգմանութեան համար ո՞ր բնագիրները օգտագործեցին: Ասորակա՛ն բնագիրները թէ՛ յունական բնագիրները: Առաջին փութանակի (աճապարանօք) թարգմանութենէն ետք անոնք մասնագիտական թարգմանութիւնը կատարեցին եօթանասնից յունարէն բնագրէն մանաւանդ Հին Կտակարանի պարագային: Եօթանասնից թարգմանութիւնը կատարուած է 285-240 Թուականներուն (Ք. Ա.): Եգիպտոսի Պտղոմէոս թագաւորը իր գրադարանապետ Տիմոթիոս Փալերիոսի թելադրութեամբ, Երուսաղեմէն 70 ուսեալ հրեայ դպիրներ կանչել կու տայ Աղեքսանդրիա- Եգիպտոս եւ Հին Կտակարանը թարգմանել կու տայ եբրայերէնէ յունարէնի: Այս թարգմանութիւնն է ահաւասիկ Եօթանասնիցը: Թարգմանչաց սերունդը այս թարգմանութեան մէջ ներառած է երկրորդական կամ պարականոն գիրքերը:



**Սբ. Թարգմանիչ Վարդապետները** Սբ. Թարգմանիչ Վարդապետներու տօնը հայ ժողովուրդի ամենանուիրական եւ սիրուած ազգային-եկեղեցական տօներէն է: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սուրբ թարգմանիչ վարդապետներու անուան ներքեւ կը տօնէ Մեսրոպ Մաշտոցի, Եղիշէ Պատմիչի, Մովսէս Խորենացիի, Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի (Շնորհալի) պայծառ յիշատակը:

Ս. Թարգմանիչներն իրենց անսահման ջերմութեամբ եւ հաւատքի լոյսով ցրեցին տիրող խաւարն ու ջերմացուցին հայ մարդու հոգին: Անոնց շնորհիւ Աստուածաշունչ մատենար հայերէն թարգմանուեցաւ, եւ հայը առաջին անգամ ըլլալով հնարաւորութիւն ստացաւ իր մայրենի լեզուով կարդալու Աստուծոյ կենդանի խօսքը: Սրբազան թարգմանիչներն իրենց լայն գործունէութեամբ նպաստեցին Հայոց աշխարհի հոգևոր-մշակութային զարթօնքին: Ս. Գրքի թարգմանութեան յաջորդեցին Եկեղեցւոյ Ս. Հայրերու բազմաբնոյթ երկերու հայերէն թարգմանութիւնները,

որոնցմէ շատեր այսօր, իրենց բնօրինակներու կորստեան պատճառով, բնագրի արժէք ստացած են:

Ս. Մեսրոպ Մաշտոց (362-440) ստեղծած է Այբուբենը 405 թուականին: Ծնած է Տարսն քաղաքի Հացեկաց գիւղին մէջ, մօտաւորապէս 362 թուականին: Ան շատ լաւ գիտեր նաեւ յունարէն, պարսկերէն, ասորերէն եւ վրացերէն: Ան արքունիքի ատենադպիր էր, ապա զինուորական ծառայութեան մտնելէ ետք 394 թուականին դարձած՝ վանական: Հայաստանի տարբեր շրջանները քարոզելով՝ Մաշտոց խորապէս գիտակցած է երկրին մէջ տիրող օտար ազդեցութիւններու հետեւանքով իր ժողովուրդին սպառնացող վտանգին եւ վճռած է ստեղծել հայոց գիրերը: Այդ նպատակով Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ ան ուղղուած է Ասորիք: Բաւական նեղութիւններէ ետք 405 թուականին Մաշտոց վերադարձած է հայրենիք իր հետ բերելով իր ստեղծած 36 գիրերը: Անկէ ետք, Ս. Սահակ հայրապետին օգնած է Հայ դպրութեան տարածման: Բացած է դպրոցներ, եկեղեցական արարողութիւնները հայացնելու նպատակով կազմած է Պատարագամատոյց «Մաշտոցի եւ Ժամագրքի նախնական տարբերակները», սկսած է Աստուածաշունչի թարգմանութիւնը, գրած է քարոզներ: Վախճանած է 17 Փետրուար 440-ին Վաղարշապատի մէջ եւ թաղուած՝ Օշական գիւղին մէջ:

Ս. Եղիշէ Պատմիչ (~ 410 - ~470) գրած է «Վարդանանց եւ Հայոց Պատերազմի Մասին», Հայ մեծ պատմիչ եւ աստուածաբան եւ կրօնաբան աշակերտ Ս. Սահակ Պարթեւի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի: 434-441 կ'ուսանի Աղեքսանդրիոյ մէջ: Հայաստան վերադառնալէ ետք կը ծառայէ Վարդան Մամիկոնեանին որպէս զինուոր եւ դպրապետ: 450-451 Վարդանանց պատերազմին մասնակցելէ ետք կը լքէ զինուորական ասպարէզը, կը հեռանայ աշխարհական կեանքէն եւ կը դառնայ մենակեաց:

Ս. Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ (~475-~550) Հայ մեծ իմաստասէր, ծնած է Տարսնի Ներգին գիւղին մէջ: Իր ուսումը ստացած է Աղեքսանդրիոյ մէջ: Հրապարակային փիլիսոփայական վէճերու մէջ իր յաղթանակներուն համար ստացած է Անյաղթ տիտղոսը: Ան հիմնադիրն է Հայաստանի մէջ տրամաբանական գիտութիւններու: Ան փիլիսոփայութեան տուած է բարոյագիտական ուղղութիւն: Դաւիթ Անյաղթի մեծագոյն գրական գործը «Մահմանք Իմաստասիրութեան» գործն է, որ մէկ հազարամեակ եղած է մեկնողական աշխատութիւններու առարկայ: Ան նաեւ ստեղծած է բազմաթիւ երգեր եկեղեցւոյ համար:

Ս. Մովսէս Քերթող Սիւնեցի (է. դար) Իր ծննդեան եւ մահուան թուականները անյայտ են: Եղած է Է. դարու երկրորդ կէսի աստուածաբան, թարգմանիչ, ծիսագետ եւ երաժիշտ-տեսաբան:

Ս. Գրիգոր Նարեկացի (951-1003) Բանաստեղծ, երաժիշտ, Հայ առաքելական եկեղեցւոյ տօնելի սուրբերէն: Անոր ամենէն յայտնի ստեղծագործութիւնն է «Մատեան Ողբերգութեան»ը, որ աւելի հանրածանօթ է իբր «Նարեկ» աղօթագիրք:

Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»ը հրատարակուած է գրաբար, աշխարհաբար՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն, եւ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, պարսկերէն, իտալերէն, գերմաներէն եւ սպաներէն: Հետաքրքրական է նաեւ թէ նոյն այս գլուխ-գործոցի գրչագիր ընթօրինակութիւններէն մեզի հասած է 150-էն աւելի օրինակներ:

Ս. Ներսէս Շնորհալի (1102 - 1173) Բանաստեղծ, երաժիշտ, ամենայն հայոց կաթողիկոս, Ներսէս Դ. Կլայեցի, կոչուած է «Շնորհալի» իր բացառիկ գիտութեան եւ առաքինի վարքին համապատասխան: Ան կրած է նաեւ բազմաթիւ այլ որակաւորումներ, որոնցմէ են «Երկրորդ լուսաւորիչ», «Եռամեծ վարդապետ», «Երանաշնորհ սուրբ», «Համահրեշտակ» եւ այլն:

Ներսէս Շնորհալիի հոգեւոր բանաստեղծութիւնները թիւով շատ են: Անոնցմէ ամենէն աւելի ծանօթ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ 24 տուներէ բաղկացած գեղեցիկ բանաստեղծութիւն մը կարելի է համարել: Այս տուններէն իւրաքանչիւրը կը վերագրուի օրուան 24 ժամերէն իւրաքանչիւրին: Ան պարզ ու նոյն ատեն խորաթափանց աղօթք մըն է:

## Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը



Մատենադարանի շէնքին դիմաց տեղադրուած են հայ գրաւոր մշակոյթի տարբեր ոլորտները ներկայացնող միջնադարեան նշանաւոր գործիչներու մեծադիր արձանները (ձախէն աջ)։

1. Թորոս Ռոսլին - մանրանկարիչ, 13-րդ դ.,
2. Գրիգոր Տաթևացի - աստուածաբան, փիլիսոփայ եւ ուսուցչապետ, 14-15-րդ դ.,
3. Անանիա Շիրակացի - մաթեմատիկոս, տոմարագէտ, տիեզերագէտ, 7-րդ դ.,
4. Մովսէս Խորենացի - պատմիչ, 5-րդ դ.,
5. Մխիթար Գոշ - իրաւագէտ, 12-13-րդ դդ.,
6. Ֆրիկ - բանաստեղծ, 13-րդ դ.,



*Մեսրոպ Մաշտոցի արձանը՝ Մատենադարանի մուտքին*



## Օշական գիւղի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին

Մեսրոպ Մաշտոցի անունը կրող այս եկեղեցին կառուցուած է 1875 թուին, Գեորգ Դ. Կաթողիկոսի օրով: Սուրբին մասունքները կը հանգչին եկեղեցւոյն խորանին տակ: 1962 թուականին, Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակին առիթով, գիւղի մուտքին զետեղուեցաւ նաեւ յուշարձան մը՝ հայ գիրերու նուիրուած կոթող մը: Կոթողը կը ներկայացնէ բացուած մատեանի նմանող երկու յուշասալեր, որոնցմէ ձախ կողմինին վրայ քանդակուած է հայերէն այբուբենը: Ան՝ այբուբենին նուիրուած առաջին յուշարձանն է (տեսնել ձախին): 2005-ին, Հայ գիրերու գիւտին 1600- ամեակին առիթով Մեսրոպ Մաշտոց եկեղեցւոյ պարտեզին մէջ տեղադրուեցան 36 գիրերը որպէս խաչքար: (որոնցմէ Թ գիրը կը գտնէք այս թերթի երրորդ էջին վրայ):

**Փութանակի թարգմանութիւն** Բոլորիս ծանօթ են, անպայման, Կորին Մքանչելի, Եզնիկ Կողբացի եւ Մովսէս Խորենացի անունները: Անոնք Մեսրոպ մաշտոցի աշակերտներն են որոնք կը դասուին մեր առաջին թարգմանիչներու կարգին: Հայաստանեայց եկեղեցին մեր թարգմանիչները սրբացնելով անոնց յատկացուցած է իւրայատուկ յիշատակութիւն, որ կը տօնենք Հոկտեմբեր ամսուան ընթացքին:



Բոլորիս ծանօթ է նաեւ այն իրողութիւնը թէ առաջին գիրքը, որ հայերէնի կը թարգմանուի 408-415 թուականներուն միջեւ, Սուրբ Գիրքի Հին ուխտն էր կատարուած Եօթանասնիցէն: Նոյնքան հետաքրքրական է նաեւ զիտնալ թէ Նոր Ուխտի հայերէն լեզուով թարգմանութիւնը եղած է ասորերէն հին թարգմանութեան մը հետեւողութեամբ: Այս թարգմանութիւնն է որ կոչուած է «փութանակի թարգմանութիւն», որ կը նշանակէ հապճեպով, անապարանքով կատարուած թարգմանութիւն:



*Միջնադարեան Հայ Չեռագիր, ԺԲ դար*

**Հայ Գրչութեան Կեդրոնները** Հայ գրչութեան առաջին կեդրոնը Վաղարշապատն է: Այստեղ Ե. դարէն սկսեալ գրուած, ընդօրինակուած եւ Հայաստանի տարբեր կողմերը դրկուած են հայերէն ձեռագիրներ: Ասոնք իրենց կարգին կրկին ընդօրինակուելով բազմացուած են գրչութեան նոր կեդրոններու մէջ:

Միջնադարեան Հայաստանի մէջ եղած են աւելի քան 1,500 գրչութեան կեդրոններ, որոնք գործած են տարբեր ժամանակներու մէջ եւ ունեցած տարբեր ընդգրկումներ: Առաւել նշանաւոր էին Վաղարշապատի, Սիւնեաց, Անձեւացեաց, Տաթեւի, Վարազի, Նարեկի, Հաղբատի, Սանահինի եւ այլ գրչութեան կեդրոնները:

# Մ. Թարգմանչաց շարական Մեսրոպ Մաշտոցին

Որք զարդարեցին տընօրինաբար զիմաստս անեղին,  
հաստատելով յերկրի Ըզգիր կենդանի:  
հովուել ըզհօտ Նոր Իսրայելի  
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուա՛ծ օրինեսցուք:

Որք զերկրաւոր մեծութիւն փառաց իւաւար կոչեցին,  
ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝  
անձառ բանին արժանի եղեն.  
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուա՛ծ օրինեսցուք:

Որք զօրութեամբ Հօր իմաստութեան Էին անեղի,  
հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի  
թարգմանութեամբ նշանագրութեան.  
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուա՛ծ օրինեսցուք:

Ով մեծագործ Մեսրոպ Մաշտոց,  
մեր առաջին բացուած դպրոց:

Մեր առաջին լեզուի տաճար,  
լուսապայծառ Հայոց հանճար:

Ամէն գիրըդ անձէթ ճրագ,  
մեզ հայ պահող անմար կրակ:

Դուն մեր մեծ պապ Հացիկ գիւղէն,  
Սշոյ դաշտի քաղցրիկ հողէն:

Շրթունքներով մեր մանկական՝  
քեզ հազար փառք յաւերժական:



## Ի՞նչ է կարծիքդ

Վերի նկարին մէջ կը տեսնենք Այբուբենի հսկայ գիրերը Ապարանի մէջ գտնուող դաշտի մը մէջ: Հաւանաբար ուրիշ ժողովուրդ չկայ որ իր Այբուբենի քարէ շինուած տառերը ցուցադրէ դաշտի մը մէջ. ցոյց տալու համար իր հպարտութիւնը իր Այբուբենին եւ լեզուին հանդէպ: Սակայն, ըստ քեզի ո՞ր մէկը աւելի կարելոր է. ցուցադրել քարացած այբուբենի տառէ ըր, թէ մեսրոպատառ այբուբենին կեանք տալ զայն գործածելով մեր առօրեային մէջ երբ կը գրենք գործածելով համացանցի (Internet, Facebook, text, email եւ այլն) վրայ:

**Վարազայ Սուրբ Խաչ** Ամեն տարի Սուրբ Գեորգին յաջորդող Կիրակին, որ միշտ Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին է, Հայաստանեայց Եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարազայ Ս. խաչի տօնը: Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեւման Վարազ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Ըստ աւանդութեան, Ս. Հոփսիմէն այդ տեղ պահեր է իր վիզի խաչը: Հոն, շուրջ 653 թուականին, երկու ճգնաւորներ, Յովել եւ Թողիկ, տեսիլք մը կ'ունենան. հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարազ լեռներ, ուր լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:

**Վարազավանք** Կը գտնուի Վան քաղաքին հարաւարեւելեան կողմը, Վարազ լեռան արեւմտեան լանջին: 653-ին երբ յայտնի կը դառնայ Վարազայ Ս. Խաչի «Նշան»ի տեղը, Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին, կը կառուցէ Ս. Նշան եկեղեցին եւ կը հաստատէ Վարազայ Ս. Խաչի տօնը: 870-ին արաբները կը գրաւեն Վարազավանքը, սակայն շատ չանցած Աշոտ Արծրունի իշխանը կ'ազատագրէ զայն: 1857-ին Վարազավանքի վանահայր կը նշանակուի Խրիմեան Հայրիկը «Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի»: Վանքը 1915-էն ի վեր լքուած է եւ ներկայիս աւերակ վիճակի մէջ կը գտնուի:



**Եկեղեցական Բառարան**

**Ա Ա Արեղայ** Ասորական ծագում ունեցող այս բառը կը նշանակէ առանձին ապրող՝ չամուսնացած: Մեր եկեղեցիէն ներս Արեղայ կը կոչուին կուսակրօն քահանաները: Տարբերութիւնը ամուսնացեալ քահանային եւ արեղային միջեւ հետեւեալն է ձեռնադրութեան օրը, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, արեղան յատուկ ուխտ կը կատարէ կուսակրօն փալու եւ չամուսնանալու: Ատոր փոխարէն ան կը խոստանայ ամբողջութեամբ նուիրուիլ հոգեւոր ծառայութեան:

**Արել** եւ Կայէն Դրախտէն վտարուելէ ետք Ադամն ու Եւան ունեցան երկու որդի: Մեծին կոչեցին Կայէն իսկ փոքրին Արել: Եղբայրները իրենց ծնողներու հետ սկսան կրել օրուայ հացը վաստակելու ծանրութիւնը: Կայէնը կը զբաղուէր հողագործութեամբ, իսկ Արելը հովիւ էր: Հայրական տան մէջ հաստատուած օրէնքի համաձայն՝ անգամ մը Կայէնը Աստուծոյ նուէր մատուցանեց իր մշակած հողի առաջին բերքէն՝ երախայրիքը. իսկ Արելը գոհաբերեց իր հօտին առաջին ծնածններէն: Տէրը սակայն կը ճանչնար անոնց սիրտերը, գիտէր որ Արելը իր գառնուկներէն ամենալաւերը ընտրեց մինչդէռ Կայէնը բերքի լաւագոյն մասը պահեց իրեն: Այս պատաճառով Աստուած ընդունեց Արելի գոհաբերութիւնը եւ տուաւ իր բարեհաճութեան նշանը իսկ Կայէնի նուէրին Ան չնայեցաւ: Եւ Կայէնը նախանձէն ու չարութենէն մղուած սպաննեց Արելը: Աշխարհի մէջ կատարուած առաջին սպաննութիւնն էր այդ: Աստուած անիծեց մարդասպանը եւ Կայէնը իր ողջ կեանքի ընթացքին հանգստութիւն եւ ապահովութիւն չգտաւ:

**ԱՂԱՒՆԻ** Կը կոչուի նաեւ Աղանաձեւ տուփ ուր հանդիսաւոր արարողութեամբ միւռոնը կը դրուի: Ան կը խորհրդանշէ Սուրբ Հոգին որ Յիսուսի մկրտութեան ատեն յայտնուեցաւ աղանիկ կերպարանքով: Միւռոնը կը դրուի Աղանիին փորը՝ եւ Աղանին ծռելով միւռոնը կը ծորիի բերնէն: Աղանին ընդհանրապէս արծաթէ շինուած կ'ըլլայ իսկ վրայի զարդարանքները ձգուած են արուեստագետի ճարտարութեան եւ ճաշակին:



**ԱՇՏԱՆԱԿ** Փայտե կամ մետաղե որեւէ մեծութեամբ կամ ձեւով կարասի մը, որուն վրայ մտնել կը դրուի հաստատուն կամ շիտակ կենալու եւ վառելու համար. գլխաւորաբար կը գործածուի սեղանի վրայ ուր սովորաբար կը գտնուին տասներկու մեծկակ աշտանակներ իրենց յարմար մոմերով: Զարդարանքի ճաշակը հետզհետէ շատցուցած է աշտանակներու թիւը իսկ այժմ կարգ մը եկեղեցիներու մէջ մոմերը փոխարինուած են մոմաձեւ լոյսերով:

**ԱՏԵԱՆ** Եկեղեցական իմաստով կը նշանակէ ՄԷՋՏԵՂ: Ատեան եկեղեցւոյ՝ կը նշանակէ եկեղեցւոյ մէջտեղը: Ատենի ժամագիրք կը նշանակէ բեմին մէջտեղ դրուած ժամագիրք: Ատենի աւետարան կը նշանակէ դասին մէջտեղ կարդալու գործածուած աւետարան:

**Բ Բ Բաբելոնեան** աշտարակաշինութիւն Նոյի սերունդները ջրհեղեղէն ետք բազմանալով աստիճանաբար սկսան արեւելքէն դէպի Սենաարի երկիրը երթալ: Ասիկա մեծ հարթավայր էր Տիգրիս եւ Եփրատ գետերու միջեւ: Անոնք կը խօսէին մէկ լեզուով:

Քամի սերունդները չէին մոռցած Նոյի անձքը եւ կը վախնային իրենց սպառնացող ստրկութենէն: Ուստի անոնք այլ ցեղերու հետ որոշեցին քաղաք մը կառուցել ուր պէտք է շինէին մինչեւ երկինք հասնող աշտարակ մը: Բայց այդ նպատակը հաճելի չէր Աստուծոյ եւ ան չհանդուրժեց այդպիսի ամբարտաւանութիւն: Աստուած խառնեց այդ մարդոց լեզուները եւ անոնք դադրեցան զիրար հասկնալէ եւ աշտարակի հետագայ շինարարութիւնը անհնար դարձաւ: Եւ այդպէս Աստուծոյ կամքով չիրականացաւ այդ խելահեղ եւ մեծամիտ ծրագիրը եւ մարդիկ ցրուեցան աշխարհի բոլոր տարածքները: Այսպիսով յառաջացան տարբեր ժողովուրդներ որոնք կը խօսէին տարբեր լեզուներով: Այդ քաղաքը կոչուեցաւ Բաբելոն որ կը նշանակէ խառնակութիւն:

**Բազպան** Բազպանները զարդարուն եւ ասեղնագործուած կտորներ են որոնք քահանան կը կրէ իր երկու թելերուն վրայ: Բազպանները կը խորհրդանշեն այն վահանները որոնք քահանան պիտի պաշտպանեն չարին դէմ որպէսզի ան կարողանայ սրբութեամբ սպասաւորել Աստուծոյ:

Այս պատճառաւ է որ զգեստաւորման ժամանակ քահանան իր թելին անցնելով երկու բազպանները կ'ըսէ. Տէր զօրութիւն տուր իմ ձեռքին:

**ԲԱԺԱԿ** Յաճախ գործածուած է Ս. Սկիհի իմաստով: Բաժակը նշխարով նկարուած Ս. Հաղորդութեան իմաստ ունի: Յաճախ բաժակը սրտի իմաստ կ'առնէ որովհետեւ իր մէջ կը պարունակէ Քրիստոսի արիւնը գինին եւ մարմինը հացը նշխարը: Բաժակը կը խորհրդանշէ նաեւ Քրիստոսի վերջին ընթրիքը եւ խաչի վրայ գոհագործումը:

**ԲԱՆԿԱՆ** Եկեղեցւոյ արտաքին դռնէն մերս մտած ատեն տաճարին մեծ դուռը չգացած անցքին մէկ կամ երկու կողմերը՝ վրան գոց ու առջելը բաց տեղեր ուր մտնելու կը գտնուի մաս կառնուի տեղեկութիւն կրնայ ստանալ հաւատացեալը եւ նուէր կրնայ ընել: Բանկալները մէկէ աւելի կրնան ըլլալ: Բանկալը կ'ունենայ իր կամաւոր պաշտօնեաները:

Պահուած բառ

|   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| h | տ | պ | ա | ր | ա | ն | պ | տ | օ | թ | մ |
| ա | ա | ա | պ | ա | տ | ա | ր | ա | գ | ա | ե |
| յ | ս | տ | ա | ց | ա | գ | ի | ր | ա | ր | ս |
| ա | ն | ո | թ | ա | ր | գ | մ | ա | ն | գ | ր |
| պ | ա | ւ | ա | ն | ա | կ | ա | ծ | կ | մ | ո |
| ա | բ | ի | ւ | ր | ծ | ե | մ | ե | ա | ա | պ |
| h | ա | ր | դ | ա | ր | կ | ա | լ | ն | ն | ս |
| պ | ն | ա | չ | ի | ն | ի | շ | թ | ա | ե | ա |
| ա | ե | ն | ե | ն | պ | ա | տ | ա | կ | լ | հ |
| ն | ա | բ | ա | ս | ի | ա | ո | ն | ա | լ | ա |
| ւ | յ | ա | յ | բ | ո | ւ | ց | բ | ե | ն | կ |

արասիա            այբ ու բեն    ալան            արդար    արանակ  
 թարգման        թարգմանել    թաւ            կալ  
 հայապահպան   մամա            մեծ            Մաշտոց    Մեսրոպ  
 նպատակ        նկանակ        շինիչ  
 պատուիրան    պատարագ    ստացագիր    Սահակ  
 տպարան        տասնաբանեայ   տարածել    տօթ

պահուած բառ՝ 6 գիրով, կաթողիկոսի մը մականունը:

### Յիսուսի Առաքեալները

Յիսուս ընտրեց 12 յատուկ ընկերներ որպէսզի իրեն օգնեն իր գործերուն մէջ: Յուդայի մասնութենէն ետք, Բսաղին 11 առաքեալներ միայն: Վարի խառնուած գիրերը շտկելով գտիր անոնց անունները եւ գրէ գծիկներուն վրայ: Կրնաս կարդալ Մատթէոս 10:2-4 եթէ օգնութեան պէտք ունիս:

ՏՐԵՈՂՍ \_\_\_\_\_ ԴԱԻՅՈ \_\_\_\_\_

ԴՐԱՍԷԱՆ \_\_\_\_\_ ՆՆՀՅՈԱՎՍԷ \_\_\_\_\_

ԲՅԱՈՈԿՍ (Զեբեդէոսի որդին) \_\_\_\_\_ ՍՄՆԻՈ \_\_\_\_\_

ՅՈՍԿԲԱՈ (Ալփէոսի որդին) \_\_\_\_\_ ԹԴԷԱՈՍ \_\_\_\_\_

ՊՊԻԻԼՓՍՈ \_\_\_\_\_ ՄՏԷՍՈԹԱ \_\_\_\_\_

ՍԷՈՈՐԲԱԹՂՍՈ \_\_\_\_\_ ԹՎԱՈՄՍ \_\_\_\_\_



Յիսուս կը քարոզէ Առաքեալներուն


# Յիսուսի Փորձութիւնը

## Մատթէոս 4.1-11

Յիսուս Սատանայէն փորձուեցաւ անապատին մէջ ուր քառասուն օր եւ գիշեր ծոմապահութեամբ անցուցած էր եւ՝ անօթի: Սատանան ըսաւ.  
 - «Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան»:

Յիսուսի պատասխանը գտէք բառերը ամբողջացնելով հետեւեալ գիրերով ու վանկերով:

|    |    |       |     |     |     |
|----|----|-------|-----|-----|-----|
| իօ | ւի | բո    | աց  | ապր | քեր |
| n  | ն  | տուած | արդ | այ  |     |



«Առանց մեսրոպեան ոճով մարդակերտումի՝ խախուտ են բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիմն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միւռոն է մեր ժողովուրդի գաւակներուն համար: Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ»:

Գարեգին Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Իրարու միացուր այս բառերն ու անոնցմէ իւրաքանչիւրին յարմարող սահմանումը:

|                |  |
|----------------|--|
| ա. Գրիչ        | 1. Հորթի կամ գառնուկի մորթով շինուած գրելու կաշի |
| բ. Վանական     | 2. Հին գիրք                                      |
| գ. Հորթ        | 3. Կովու ձագ                                     |
| դ. Մագաղաթ     | 4. Վանքի մէջ ապրող կրօնական                      |
| ե. Մատեան      | 5. Ձեռագիր մատեան ընդօրինակող մարդ               |
| զ. Մատենադարան | 6. Հոն՝ ուր ձեռագիր մատեաններ պահուած են         |

### Խօսքեր՝ Ղազարոս Աղայեանէն

Բաւական չէ ազգասէր եւ հայրենասէր ըլլալը: Պէտք է քիչ մըն ալ լեզուասէր ըլլալ, պէտք է սիրել, պաշտել, զգուել հարազատ լեզուն. այս սէրը միայն կը բանայ մեր առջեւ լեզուի անհատնում ճոխութիւնը, անոր նրբութիւնը եւ քաղցրութիւնը:

Եթէ բոլոր հայ մայրերը այնքան հայրենասէր եւ ազգասէր ըլլան, որ իրենց գաւակներուն հետ մայրենի լեզուով խօսին, անոնց սրտին մէջ ազգային պատուասիրութիւն ձգեն, հայրենիքի սէր, ալ այնուհետեւ ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզի:

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս Աւետարանին 9.12-13ի  
կ'իրիկնանար, Արձակե՛, գտնեն, ամայի, ուտելիքը, ձուկ,  
հաց, բաւականաչափ

Երբ օրը -----, տասներկու աշակերտները  
մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն  
ու ազարակները, հանգչին եւ ուտելիք -----, որովհետեւ հոս  
----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւր սուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է. բայց եթէ  
կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար ----- կերակուր  
կը գնենք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիւտը:

- ա. 301
- բ. 405
- գ. 451
- դ. 325

7.- Այս չորս Աւետարանիչներէն ո՞վ բժիշկ էր:

- ա. Ս. Մատթէոս
- բ. Ս. Մարկոս
- գ. Ս. Ղուկաս
- դ. Ս. Յովհաննէս

2.- Ո՞ր գիրքը առաջին անգամ հայերէնի թարգմանուեցաւ:

- ա. Մեր հայերէնի գիրքը
- բ. Կարմիր գլխարկիկը
- գ. Աստուածաշունչը
- դ. Յայսմաուրբը

8.- Այս տարի, Հոկտեմբերի ո՞ր օրը Ս. Խաչին Գիւտը կը սօնենք:

- ա. 10
- բ. 17
- գ. 23
- դ. 29

3.- Ո՞վ ստեղծեց հայ գիրերը:

Սուրբ Մ----- Գ

9.- Յիսուս ինչո՞վ կերակրեց 5,000ը:

4.- Ո՞ւր էր հայ գրչութեան առաջին կեդրոնը:

Վ-----տ

- ա. 5 հաց եւ 2 ձուկ
- բ. 2 հաց եւ 2 ձուկ
- գ. 2 հաց եւ 5 ձուկ
- դ. 5 հաց եւ 5 ձուկ

5.- Ո՞վ է այն սուրբ թարգմանիչը որ գրած է «Հաւատով Խոստովանիմ»ը:

- ա. Ս. Եղիշէ Պատմիչ
- բ. Ս. Դաւիթ Անյաղթ
- գ. Ս. Մովսէս Քերթոզ
- դ. Ս. Ներսէս Շնորհալի

10.- Քանի՞ կողով ճաշ աւելցաւ 5,000ը կերակրելէն ետք:

- ա. 2
- բ. 5
- գ. 10
- դ. 12

6.- Ո՞վ է այն սուրբ թարգմանիչը որ գրած է «Նարեկ»ը:

- ա. Ս. Եղիշէ Պատմիչ
- բ. Ս. Դաւիթ Անյաղթ
- գ. Ս. Մովսէս Քերթոզ
- դ. Ս. Գրիգոր Նարեկացի

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Գրէ՛ հայերէնի թարգմանուած առաջին համարը:

«Ճ----- Գ-----  
եւ Գ----- Ի-----  
Գ----- Ի-----»:

2.- Հին Կտակարանի ո՞ր գիրքին առաջին գլխուն երկրորդ համարն է վերել յիշուածը:

- ա. Առակաց
- բ. Սաղմոսաց
- գ. Ժողովող
- դ. Երգ Երգոց

3.- Գրէ՛ 4 Սուրբ Աւետարանիչներուն անունները:

- ա. Ս. -----
- բ. Ս. -----
- գ. Ս. -----
- դ. Ս. -----

4.- Ամբողջացո՛ւր, գործածելով հետեւեալ թիւերէն երկուքը:  
12, 24, 48, 72

Բացի -- առաքեալներէն Յիսուս ունէր նաեւ -- աշակերտներ:

5.- Հետեւեալներէն ո՞վ Ս. Թարգմանիչներուն մաս չի կազմեր:

- ա. Եղիշէ Պատմիչ
- բ. Ներսէս Շնորհալի
- գ. Դաւիթ Անյաղթ
- դ. Թորոս Ռոսալին

6.- Ո՞վ էր Յիսուսի կրտսերագոյն առաքեալը:

- ա. Մատթէոս
- բ. Մարկոս
- գ. Ղուկաս
- դ. Յովհաննէս

7.- Ըսէ՛ մէկ բառով՝ Ոսկի բերան ունեցող.

Ս. Յովհան Ո-----

8.- Ո՞վ գրեց «Վարդանանց եւ Հայոց Պատերազմի Մասին»:

- ա. Ս. Եղիշէ Պատմիչ
- բ. Ս. Ներսէս Շնորհալի
- գ. Ս. Դաւիթ Անյաղթ
- դ. Ս. Գրիգոր Նարեկացի

9.- Ո՞վ գրած է «Հաւատով Խոստովանիմ»ը:

- ա. Ս. Եղիշէ Պատմիչ
- բ. Ս. Ներսէս Շնորհալի
- գ. Ս. Դաւիթ Անյաղթ
- դ. Ս. Գրիգոր Նարեկացի

10.- Ո՞վ գրած է «Նարեկ»ը:

- ա. Ս. Եղիշէ Պատմիչ
- բ. Ս. Ներսէս Շնորհալի
- գ. Ս. Դաւիթ Անյաղթ
- դ. Ս. Գրիգոր Նարեկացի



Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

1.- Աստուածաշունչի հայերէնի առաջին թարգմանութիւնը կատարուեցաւ հետեւեալ յունարէն թարգմանութենէն.

Եօթ----- կամ Septuagint LXX:

Փ----- թարգմանութիւն

7.- Հայաստանի ո՞ր գիւղին մէջ կը գտնուի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:

2.- Թուէ՛ 6 սուրբ թարգմանիչները՝ ժամանագրական կարգով:

ա. (362-440) -----

բ. (410 - 470) -----

գ. (475-550) -----

դ. (Է. դար) -----

ե. (951-1003) -----

զ. (1102 - 1173) -----

8.- Ո՞ւր գրուած է:

«Մարդ միայն հացով չ'ապրիր այլ բոլոր այն խօսքերով որ Աստուած խօսած է».

Մատթէոս -.-

3.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է «Մատեան Ողբերգութեան» հատորին հեղինակը:

Ս. -----

9.- Թուէ՛ Մատենադարանի շէնքին դիմաց հայ գրաւոր մշակոյթի տարբեր ոլորտները ներկայացնող արձանները:

ա. Թ----- Ռ-----

բ. Գ----- Տ-----

գ. Ա----- Ծ-----

դ. Ս----- Խ-----

ե. Մ----- Գ-----

զ. -----

4.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է «Նարեկ» հատորին հեղինակը:

Ս. -----

5.- Ո՞ր սուրբ թարգմանիչը փիլիսոփայական բանավեճերու մէջ միշտ յաղթող էր:


Ս. -----

10.- Ս. թարգմանիչներէն ո՞վ նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս եղած է:

Ս. -----

6.- Ըսէ՛ մէկ բառով «հապճեպով, աճապարանքով կատարուած թարգմանութիւն»:

## Լուրեր՝ Կիրակնօրեայէն



Տնօրէնի օգնականը եւ երկրորդականի պատասխանատուները կը ծրագրեն երկրորդականի Հոկտեմբեր ամսուան յայտագիրը:



Նշելու համար Խաչվերացը, աշակերտները Խաչքար յիշեցնող խաչ կը պատրաստեն:

## Լուրեր` Կիրակնօրեայէն

Կիրակի` 17 Սեպտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ մեր 2017-18 Տարեշրջանի (38-րդ) Վերամուտը: Արձանագրութիւնները շարունակուեցան Սեպտեմբեր 24-ին: Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00: Ներփակ կը գտնէք Վերամուտէն նկարներ:



**Խաչվերացի**ն օրը, Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները **ՌԵՅԱՆ**ի թուփ մը ստացան, պատրաստուած Տիկ. Շողիկ Նաճարեանին կողմէ: Ստորեւ կը ներակայացնենք գրութիւն մը քաղուած <http://www.aztagdaily.com/archives/28890>-էն:

Ընտանի բոյսերու դասակարգին մէջ ամէնէն «համեստը» կը նկատուի ռեհանը` քաղցրաբոյր բոյս մը, արագ աճող, տոկուն, երկարատեւ ներկայութիւն պահպանող: Առաւելաբար պատշգամբի յատուկ, թաղարներու մէջ աճող այս բոյսը արժանացած է ժողովրդական լայն շրջանակներու յատուկ ուշադրութեան: Կը պատկանի անանուխի «տոհմաճիւղին», որ ունի նաեւ բուժիչ յատկութիւն` կարգ մը ցաւերու պարագային:

Ռեհանը անցած է մեր գրականութեան` շնորհիւ Գրիգոր Զոհրապի մէկ սիրուն եւ

սրտամօտ պատմուածքին:

Ռեհանը մեծարուած է նոյնպէս Հայաստանեայց Եկեղեցիին կողմէ` իբրեւ օրինաբեր, բուրուճաւետ բոյս, մասնաւորաբար Խաչվերացի տօնին, որ կը զուգադիպի սեպտեմբեր ամսուան 14-ի մօտիկ կիրակիին: Մեր եկեղեցին ռեհան կ'օրհնէ Խաչվերացի սուրբ պատարագի ընթացքին, եւ յաւարտ եկեղեցական արարողութեանց` օրհնուած ռեհանը կը բաշխէ (փոքր ճիւղերով) հաւատացեալ ժողովուրդին` իբրեւ խաչի կենարար օրհնութիւն:

Չենք ուզեր մտնել մանրամասնութեան մէջ` եկեղեցական-ծիսական երեսը բացատրելու, թէ ինչու` ղիմուած է ռեհանի բոյրին, այլ կը մատնանշենք միայն, Խաչվերացի տօնին առիթով, դալար, ազնիւ, բուրուճաւետ բոյսերու ներգործութիւնը մարդ արարածին կեանքին մէջ` զայն առաջնորդելով դէպի աստուածային խորհուրդները, բնութեան հետ հաշտ ապրելու զգացումը մշակելով:

Այս ըսելով` կը մտաբերենք նոյնպէս ԱԻԱՆԴՈՒԹԻԻՆ կոչուած այն ուժը, որ ազգի մը պահպանման խթանն է, անոր մէջքի գօտին, ինքզինք ամուր եւ զօրաւոր զգալու անփոխարինելի գործօնը: Յիշեցինք ռեհանը, այս պարզուկ բայց բուրուճաւետ բոյսը, յիշեցնելու համար աշխարհիկ ամէն տեսակ հրապոյրներու թակարդին մէջ ինկած մեր հայրենակիցներուն, թէ պահիկ մը մեր աչքերը սեւեռենք դարերու աւանդութիւններէն եւ հաւատալիքներէն մեզի փոխանցուած իւրայատուկ ապրումներուն, ցեղային գոյներուն, որպէսզի կարենանք պահպանել մեր ինքնութիւնը իբրեւ հայ` մարդկութեան մէջը:

## Լուրեր՝ Կիրակնօրեային

«Երէկ՝ Կիրակի 24 Սեպտեմբերին, Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտ-աշակերտուհիները Ս. Հաղորդութիւն ստանալու համար եկեղեցի եկան: Նախ հետեւեցան Ս. Պատարագին, ներկայ եղան Հայաստանի Վերանկախացման նուիրուած Մաղթանքի արարողութեան, ապա հաղորդուեցան: Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը կրօնասիրութիւնը եւ հայրենասիրութիւնը կը շաղախէ մեր փոքրիկներու հոգիներուն մէջ:»

Առնուած Սուրբ Յակոբ Եկեղեցոյ Դիմատետրի (Facebook) 25 Սեպտեմբերի գրառումէն:



2017-18 Տարեշրջան (38-րդ)

Գործունէութիւն Ամէն Կիրակի Ժամը 10:30 – 13:10

|               |                                     |                   |
|---------------|-------------------------------------|-------------------|
| Մանկապարտէզ : | Ա., Բ. եւ Գ. Դասարաններ             | (3 - 5 տարեկան)   |
| Նախակրթարան : | Ա., Բ., Գ., Դ., Ե. եւ Զ. Դասարաններ | (6 - 11 տարեկան)  |
| Երկրորդական : | Ա., Բ., Գ., Դ. եւ Ե. Դասարաններ     | (12 - 16 տարեկան) |

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝ Թորոս Պապիկեան Հէռ. (514)-956-1277 email [director@sourphagop.org](mailto:director@sourphagop.org)

Կայքէջ՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org) 17-րդ տարի

Ամսաթերթ՝ «Մաշտոցի Արձագանգ» 25-րդ տարի

[www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ)